Հաստատում եմ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական

պետական մանկավարժական համալսարանի

ռեկտոր՝ Ռուբեն Միրզախանյան

«30» մարտի 2011թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

№	Աշխատանքի ձևը	Դասաբաշխման հաշվարկի չափանիշները		Ժամաքանակի միավորը	Կատարող
1.	Դասախոսություն (հոսքերով)	Մեկ հոսքը՝	բակալավրիատ մինչև 90 ուսանող	ըստ ուսումնական պլանի	դասախոս
			մագիստրատուրա մինչև 60 ուսանող		
2.	Գործնական և սեմինար պարապմունք (խմբերով)	Մեկ խումբը՝ մինչև 30 ուսանող		ըստ ուսումնական պլանի	դասախոս
2.1.	Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստալրագրություն, ռադիոլրագրություն հեռուստաֆիլմերի և հեռուստածրագրերի ռեժիսուրա, գեղարվեստական լուսանկարչություն և օպերատորություն, մասսայական հանդիսությունների ռեժիսուրա մասնագիտությունների խմբերի պարապմունքները անցկացնել ենթախմբերով: «Սոլֆեջիո», «Հարմոնիա», «Պոլիֆոնիա» և «Երաժշտական ստեղծագործության վերլուծություն» առարկաների գործնական և լաբորատոր պարապմունքների խմբերը ձևավորել մինչև 10 ուսանող:				
2.2.	Կերպարվեստ և գծագրություն, Կերպարվեստի պատմություն և տեսություն, Կիրառական արվեստ, Կերպարվեստ և գծագրություն (գծագրություն) մասնագիտությունների գործնական պարապմունքների խումբը սահմանել մինչև 12 ուսանող:				
2.3.	Օտար լեզուների մասնագիտական գործնական պարապմունքներն անցկացնել ենթախմբով:				
3.	Լաբորատոր պարապմունք (ենթախմբերով)	Մեկ ենթախումբը՝ մինչև 15 ուսանող		ըստ ուսումնական պլանի	դասախոս
4.	Խորհրդատվություն (կոնսուլտացիա) հեռակա ուսուցման քննական առարկայից	Մեկ հոսքը		2	դասախոս
5.	Գիտելիքների գնահատում (առկա և հեռակա ուսուցում)	Յուրաքանչյուր ստուգման ձևին (ընթացիկ ստուգում, ստուգողական գրավոր աշխատանք, ստուգարք, քննություն և այլն)		0,25	դասախոս

№	Աշխատանքի ձևը	Դասաբաշխման հաշվարկի չափանիշները		Ժամաքանակի միավորը	Կատարող
6.	Ինքնուրույն աշխատանքների կազմակերպում և ստուգում	Յուրաքանչյուր առարկայի ընդհանուր ժամաքանակի՝ ա) I - IV կուրսերում – 10% բ) III և IV կուրսերում – 15 % (մասնագիտական առարկայից) գ) մագիստրատուրայի I և II կուրսերում՝ մասնագիտական ոչ մասնագիտական	 20 % 10 %	ըստ ուսումնական պլանի	դասախոս
7.	Կուրսային աշխատանքի (նախագծի) ղեկավարում, պաշտպանություն	Մեկ աշխատանքի (նախագծի) համար	ա) ղեկավարում	5	դասախոս
			բ) պաշտպ. անդամակցություն 2 անդամ՝ յուրաքանչյուրին՝	0.5	
8.	Ավարտական աշխատանքի ղեկավարում	Յուրաքանչյուր աշխատանքի համար ա) ղեկավարին բ) գրախոսողին Դասախոսը կարող է ղեկավարել մինչև 5 աշխատանք		**22, որից** 20 2	ղեկավար գրախոս
9.	Ուսումնական պրակտիկա	Մեկ խմբին յուրաքանչյուր շաբաթվա համար՝ (խումբը՝30 ուսանող)		30	ուսումնական պրակտիկայի ղեկավար
10.	Մանկավարժական պրակտիկա	Մեկ ուսանողին՝ ա) 4 շաբաթ տևողության դեպքում՝ մանկավարժին՝ 2 ժամ, հոգեբանին՝ 1 ժամ, մեթոդիստին 9 ժամ, ֆակուլտետի մանկավ. պրակտիկայի ղեկավարին՝ 1 ժամ բ) 5 շաբաթ տևողության դեպքում՝ մանկավարժին՝ 2 ժամ, հոգեբանին՝1 ժամ, մեթոդիստին՝ 12 ժամ, ֆակուլտետի մանկավ. պրակտիկայի ղեկավարին՝ 1 ժամ		13 16	մեթոդիստ մանկավարժ հոգեբան ֆակուլտետի պրակտիկայի ղեկավար
10.1	Մանկավարժական պրակտիկա (ճամբարային)	Մեկ շաբաթվա համար յուրաքանչյուր ուսանողին		1	մանկավարժ մեթոդիստ
10.2	Մագիստրոսական կրթության գիտամանկավարժական, ստեղծագործամանկավար-ժական, կատարողական պրակտիկա	Մեկ շաբաթվա համար յուրաքանչյուր ուսանողին 3 ժամ	ա) 2 շաբաթ	6	պրակտիկայի ղեկավար
			բ) 3 շաբաթ	9	

№	Աշխատանքի ձևը	Դասաբաշխման հաշվարկի չափանիշները		Ժամաքանակի միավորը	Կատարող
11.	Մագիստրոսական կրթության ստեղծագործական, կատարողական, հետազոտական աշխատանք	Ընդհանուր ժամերի՝ ա) Հետազոտական աշխատանք կիսամյակում բ) Հետազոտական պրակտիկա գ) Մագիստրոսական թեզի պատրաստում	10%	ըստ ուսումնական պլանի	գիտական ղեկավար դասախոս
12.	Պետական որակավորման քննության նախապատրաստելու համար ակնարկային դասախոսություն և խորհրդատվություն (բակալավր. ուսուցում)	Յուրաքանչյուր ավարտական քննության համար		8	դասախոս
13.	Պետական որակավորման քննություն (բակալավր. և մագիստր. ուսուցում)	Մեկ ուսանողի համար	ա) նախագահին	1	հանձնաժողով
			բ) անդամին	0,5	
14.	Ասպիրանտների և հայցորդների ղեկավարում	ա) Մեկ ասպիրանտի համար բ) Մեկ հայցորդի համար Պրոֆեսորի և դոցենտի պաշտոն զբաղեցնող դասախոսները կարող են միաժամանակ ղեկավարել մինչև 5 ասպիրանտ և հայցորդ		60 30	ասպիրանտի և հայցորդի ղեկավար
15.	Ամբիոնի աշխատանքների ղեկավարում, կազմակերպում, դասալսում	Ուսումնական տարում		50	ամբիոնի վարիչ

Հիմք ունենալով ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունների մասին ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 1-ի № 201-Ն որոշումը 2011 թվականից համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար սահմանել բեռնվածության հետևյալ ուսժամաչափերը.

1. Ամբիոնի պրոֆեսոր - 700 – 800 ժամ
   Ամբիոնի դոցենտ - 750 – 850 ժամ
   Ամբիոնի ասիստենտ - 830 – 900 ժամ
   Ամբիոնի դասախոս - 830 – 900 ժամ

Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի, ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի, արտասահմանյան լեզուների (բացառությամբ թողարկող ամբիոնների և այն դասախոսների, որոնց բեռնվածության մեջ 50%-ից ավելին գերակշռում են մասնագիտական դասախոսական ժամերը), ֆիզիկական դաստիարակության, խմբավարության և ձայնադրման, նվագարանների, գեղանկար, գծանկարի, դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի, պարարվեստի մանկավարժություն, հեռուստառադիոլրագրություն, հեռուստառեժիսուրայի, օպերատրության և գեղարվեստական լուսանկարչության, մասսայական հանդիսությունների ռեժիսուրայի և մշակութաբանության, երաժշտության ամբիոնների համար, որոնց բեռնվածության մեջ գերակշռում են գործնական ժամերը

2. Ամբիոնի պրոֆեսոր - 750 – 830 ժամ
   Ամբիոնի դոցենտ - 850 – 950 ժամ

Ամբիոնի ասիստենտ - 950 – 1080 ժամ
Ամբիոնի դասախոս - 950 – 1080 ժամ

Վերը նշված նորմատիվային բեռնվածություններից տարբեր ժամաքանակների դեպքում առաջնորդվել կից ներկայացվող հավելվածով.

<u>Հավելված</u>

2011թ. պրոֆեսորադասախոսական անձնակազմի նորմատիվային բեռնվածություններից տարբեր ավելի ժամաքանակների դեպքում առաջնորդվել ստորև բերված տվյալներով.

1.1. Ամբիոնի պրոֆեսոր - 875 – 900 ժամ
Ամբիոնի դոցենտ - 900 – 1080 ժամ
Ամբիոնի ասիստենտ - 900 – 1080 ժամ
Ամբիոնի դասախոս - 900 – 1080 ժամ

Հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի, ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի, արտասահմանյան լեզուների (բացառությամբ թողարկող ամբիոնների և այն դասախոսների, որոնց բեռնվածության մեջ 50%-ից ավելին գերակշռում են մասնագիտական դասախոսական ժամերը), ֆիզիկական դաստիարակության, խմբավարության և ձայնադրման, նվագարանների, գեղանկար, գծանկարի, դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի, պարարվեստի մանկավարժություն, հեռուստառադիոլրագրություն, հեռուստառեժիսուրայի, օպերատրության և գեղարվեստական լուսանկարչության, մասսայական հանդիսությունների ռեժիսուրայի և մշակութաբանության, երաժշտության ամբիոնների համար, որոնց բեռնվածության մեջ գերակշռում են գործնական ժամերը

2.1. Ամբիոնի պրոֆեսոր - 930 – 1080 ժամ
Ամբիոնի դոցենտ - 1000 – 1080 ժամ

Նշված բեռնվածությունների դեպքում պրոֆեսորադասախոսական անձնակազմին լրացուցիչ վճարել համապատասխան տարակարգի աշխատավարձի 25%-ի չափով:

1. Ամբիոնի դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունը բաշխում է ամբիոնի վարիչը, հաստատում է ֆակուլտետի խորհրդը և ներկայացնում ռեկտորատի հաստատմանը:

   1.1 Պրոֆեսորի ծանրաբեռնվածության մեջ դասախոսությունները կազմում են առնվազն 120 ժամ:
   1.2 Դոցենտի ծանրաբեռնվածության մեջ լսարանային (դասախոսություն, գործնական, լաբորատոր, սեմինար) ժամերը պետք է կազմեն ոչ պակաս քան 280 ժամ, իսկ դասախոսությունները առնվազն՝ 140 ժամ:
   1.3 Համատեղող մասնագետին կախված նրա զբաղեցրած գիտական կոչումից կարելի է տարեկան հատկացնել մինչև 540 ժամ կամ ժամավճարային կարգով մինչև 360 ժամ ծանրաբեռնվածություն՝ դասախոսություններ կարդալու, կուրսային, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ասպիրանտների և հայցորդների ղեկավարման համար:

Հաստատված է Հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2011թ. մարտի 30-ի նիստում:

Կատարողներ՝Մ.Երիցյան, Տ.Այվազյան, Ա.Ղուշչյան